ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 19-Ա

13 մայիսի 2016թվական Անուշավան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.22 ՀԵԿՏԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 0.0099 ՀԵԿՏԱՐ ՀՈՂՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ հաշվի առնելով <<Ղ-Տելեկոմ>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2015 թվականի հոկտեմբերի 20-ի գրությունը և քաղաքացիներ Ռոստոմ Անդրեասյանի, Փառանձեմ Անդրեասյանի, Ժենիկ Անդրեասյանի, Նարեկ Անդրեասյանի, և Տաթև Անդրեասյանի 2016 թվականի մարտի 22-ի դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմային (կցվում է որոշմանը), որով նախատեսվում է համայնքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացիներ՝ Ռոստոմ Անդրեասյանին, Փառանձեմ Անդրեասյանին, Ժենիկ Անդրեասյանին, Նարեկ Անդրեասյանին, և Տաթև Անդրեասյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 0.22 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերից 0.0099 հեկտար հողամասը /կադաստրային ծածկագիրը՝ 08-014-0003-/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կապի գործառնական նշանակություն՝ «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից այդ հողամասում տեղադրված շարժական կապի բջջային կայանի գործառնական նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու համար:

2. Համայնքի ղեկավար Երվանդ Հակոբյանին՝

հողերի օտագործման ժամանակավոր սխեմայով սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կապի գործառնական նշանակություն փոխելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով կազմել հողաշինարարական համապատասխան գործ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ձեռնպահ-0 Կողմ-6 Դեմ-0

Մ. Բայադյան կողմ ----------

Ա. Կարոյան կողմ ----------

Ռ. Հակոբյան կողմ ----------

Ռ. Հարությունյան կողմ ----------

Ա. Վարդանյան կողմ ----------

Գ. Վարդանյան կողմ ----------

Ա. Տեփանոսյան կողմ ----------

Անուշավան համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

13 Մայիսի 2016թվական

գ. Անուշավան